

վիճակի մէջ: Ժողովուրդը այդ ժայռերուն «Քրիստոսի քարերը» (որ ծանօթ են ըստ վանական աւանդութեան P. E. F. 1881, էջ 82) կամ «հինգ հացերը» անունը կուտայ: Այս քարերէն մէջտեղինը կը համարուի «Մեսիայի Աթոռը» ուր Յիսուս բազմեցաւ երբ հացերը կը բաժնէր անօթի ժողովուրդին: Ուխտաւորներուն այս տեղէն անցած ժամանակ յոյն քահանաները իրենց ուսերուն վրայ կերպասի կտոր մը ունենալով՝ փոքրիկ հաց մը կը ծախեն անոնց, ի յիշատակ հրաշալի հացերուն: Ոմանք կ'ըսեն թէ հացերու երկրորդ հրաշքին տեղն ալ գտնուած է, այսինքն չորս հազարներու հրաշքը որ կ'ապացուցանէ թէ հնագոյն աւանդութիւնը միևնոյն տեղը կը դնէ հացի երկրորդ հրաշքը (Մասք. Ժե. 32 Աայլն): Բայց դեռ ԺԳ. դարուն նոյն հրաշքին տեղը ցոյց կուտային ծովեզերքին հիւսիսային կողմը: Մեր ակնարկած տեղը կը թուի թէ Յուդիթի գիրքին հին Բետիղուան է (Չ. Է. Ը. ԺԱ. ԺԲ. ԺԳ. այլևայլ համարներուն մէջ), ինչպէս կ'ընդունին Յովհաննէս Բոլոնիացի, Թէոտորիք եպս. և այլ ուղեգիրներ: 1596 էն սկսեալ ակնարկութիւններ կ'ըլլան հինգ հազար անձերու հացի հրաշքը հոն տեղականացրնելու մասին: Հաւանական է որ երբ գիւրին չէր լճին եզերքը այցելել, վանականները հոն տարած են պատմութիւնը նոյն դէպքերուն որ այս երկրին կը վերաբերէին և մին միւսին կապած էին, այսինքն լեւրան քարոզը և հացերուն հրաշքը: Թերևս ժամանակ մը այս տեղերը հեռուէն ցոյց կուտային ուխտաւորներուն(*), նոյն աւանդութիւնը հաստատուելէ առաջ (Dal. էջ 155 - 156):

(*) Երբեմն Թաբորի բարձունքէն կը նայէին հեռուն, աւանդու-